«ԱԴՐԲԵՋԱՆՆ Է ԱՅՍՕՐ ԹԵԼԱԴՐՈՒՄ ԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

Պնդում է Արամ Սարգսյանը՝ միաժամանակ բացահայտելով նոր փաստաթղթի գոյությունը

Երեկ՝ դեկտեմբերի 11-ին, ԱԺ-ում հրավիրված ասուլիսի ընթացքում «Արդարություն» խմբակցության ներկայացուցիչ Արամ Սարգսյանը (ՀԴԿ) տեղեկացրեց, որ մերձմոսկովյան «Սնեգիրի» քաղաքում 3 տարվա ընթացքում իրականացված 5 հանդիպումների արդյունքում ընդունվել է փաստաթուղթ, որը իբրեւ առաջարկ դրվել է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների սեղանին

ԳՈՀԱՐ ՎԵԶԻՐՅԱՆ

Ըստ նրա՝ հանդիպումները իրականացվել են Դորտմունդի կոնֆերանսի շրջանակներում ամերիկյան Քեթերինգի հիմնադրամի հովանու ներքո: Այս հանդիպումներում համանախագահների դերը ստանձնել են ԱՄՆ նախկին պետքարտուղարի տեղակալ Հարոլդ Սոնդերսը եւ Ռուսաստանից Վիտալի Նաումկինը (ՌԴ Արեւելագիտության ինստիտուտի եւ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն): Այստեղ Հայաստանի Հանրապետությունը բացի Արամ Սարգսյանից ներկայացրել է նաեւ Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ռեկտոր Սուրեն Զոլյանը, Ղարաբաղի ներկայացուցչության կազմում ընդգրկված է եղել նաեւ ԼՂՀ ներկայիս արտգործնախարար Աշոտ Ղուլյանը, եւ 5 ներկայացուցիչներ Ադրբեջանից, որոնց թվում երկրի նախկին արտգործնախարար Թոֆիկ Զուլֆուգարովը:

Ըստ Սարգսյանի՝ Մինսկի խումբը համաձայնել է ուղղորդվել այդ փաստաթղթով՝ օգտագործելով բանակցային գործընթացի վերսկսման եւ իրականացման ժամանակ: Փաստաթուղթը մի գծագիր է, որտեղ ներառված են այդ հանդիպումների բանակցային կողմերի՝ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի առաջարկները: Սարգսյանի հավաստմամբ՝ Ադրբեջանի առաջարկը միշտ նույնն է՝ Հայաստանը պետք է ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղը: Բացի այս, ըստ «Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում խաղաղարար գործընթացի նախագիծ» կոչվող փաստաթղթի՝ այս գործընթացը պետք է վերսկսի, եթե 3 կողմերն էլ հանդես գան համատեղ հռչակագրով, որի համաձայն՝ կողմերը պետք է իրենց վրա պարտավորություն վերցնեն պահպանել հրադադարը, ապա հաշտության համաձայնագիր կնքեն: Սա արվում է նրա համար, որ եթե Ադրբեջանը պահանջում է Ղարաբաղը դիտել որպես իր տարածք ու դրա դիմաց ինքնավարության ինչ-որ մակարդակ է ապահովում, ապա ըստ Սարգսյանի՝ Ադրբեջանը նախեւառաջ պարտավոր է խաղաղության պայմանագիր կնքել Ղարաբաղի եւ Հայաստանի հետ, որից հետո քայլ առ քայլ կարելի է գնալ խնդրի լուծմանը: Ըստ նրա՝ սա իրականացման փուլային տարբերակը չէ, պարզապես խոսք է գնում ծեւավորելու այն հիմնական փաստաթուղթը, որից հետո նոր կսկսի փաստաթղթի իրականացումը:



Այնուամենայնիվ, Սարգսյանը կարծում է, որ վերոնշյալ փաստաթուղթը չի կարող ամբողջովին ընդունելի լինել հայկական կողմի համար, սակայն կարող է ընդունվել որպես հիմք բանակցությունները վերսկսելու համար: Մասնավորապես, ՀԴԿ նախագահն անընդունելի է համարում ադրբեջանական կողմի առաջարկները՝ ազատագրված տարածքների վերադարձը եւ միջազգային խաղաղարար ուժերի կողմից դրանց վերահսկումը:

Ինչ վերաբերում է հայկական կողմի առաջարկներին, ապա արձանագրվել է, որ բանակցությունները սկսվեն առանց նախնական պայմանների՝ հաշվի առնելով պատերազմի արդյունքում ստեղծված իրողությունները: Ըստ նրա՝ «ազատագրված տարածքների վերադարձը խաթարում է Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը, եւ հայկական կողմը չի կարող գնալ այդ քայլին»: Վերջինս ընդգծեց, որ «մեր զիջումները կարող են լինել նվազագույն. օրինակ՝ Ղարաբաղին Հայաստանի կազմում չներառելը»:

Շարունակությունը՝ 6-րդ էջում

կարգախոսում

Սկիզբը՝ 2-րդ էջում

«ԱԴՐԲԵՋԱՆՆ Է ԱՅՍՕՐ ԹԵԼԱԴՐՈՒՄ ԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

ՀԴԿ ղեկավարը նկատեց, որ մինչ Հայաստանի իշխանությունները հրաժվում են Քիվեսթյան պայմանավորվածություններով, ԱՄՆ ներկայացուցիչը հայտարարում է, որ նրանք միանշանակ ճանաչում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ներառյալ Լեռնային Ղարաբաղը. «Սրանով ասված է ամեն ինչ, քանի որ Ադրբեջանը, որը տանուլ է տվել իր իսկ հրահրած պատերազմում, այսօր պայմաններ է թելադրում եւ Հայաստանին, եւ Ղարաբաղին, եւ միջնորդի դերը ստանձնած Մինսկի խմբին»: Վերջինս նշեց նաեւ, որ Հայաստանի ղեկավարությունը ուղղակի խանգարում է Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը վարել ճիշտ քաղաքականություն: Աժ պատգամավորի կարծիքով, անհրաժեշտ է ձեւափոխել ամբողջ քաղաքական կուրսը՝ հայտարարելով, որ «ԼՂՀ-ի տարածքը Հայաստանի տարածքն է, եւ մենք չենք խախտել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»: Վերջինս կարեւորում է նաեւ այն հանգամանքը, որ 15 տարի է Հայաստանում քաղաքական ուժերն ու հասարակությունը միասնական դիրքորոշում կամ տեսակետ չեն մշակել: «Մեզ մոտ միայն լոզունգային դիրքորոշումներ են, այդպիսին է նաեւ մեր պաշտոնական տեսակետը, մինչդեռ Ադրբեջանում կա այդ հստակ մոտեցումը՝ Լեռնային Ղարաբաղը մերն է, ուրիշ ոչինչ»:

Ինչ վերաբերում է Վարդան Օսկանյանի վերջին հայտարարությանը, որ Մեղրիի հարց գոյություն չունի, ապա Սարգսյանը նկատեց, որ «այսօր Մեղրին ստացել է մեկ այլ որակավորում՝ ճանապարհ, որը կապում է Ադրբեջանը Նախիջեւանի հետ, եւ որը չի վերահսկվելու Հայաստանի կողմից»:

Վերջում ՀԴԿ նախագահը ավելացրեց՝ «եթե այսպես շարունակվի, ապա վերսկսվելու է այն գործընթացը, որ բերեց իշխանափոխության, այս պարագայում՝ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկությանը»: Միաժամանակ ամփոփեց՝ հայտարարելով՝ «ժամանակն է գաղտնազերծել բանակցային գործընթացը, ինչի նախաձեռնողը պետք է լինի Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը»: